

եանց պարագ աշուներին, այլ սովորման անելով՝ չէնց որ մշակները զագարեցնում են կերակու սալը, որքերը լղարանում են, նորա միայն մեղրով ապրել չեն կարող: Երկրորդ օրը արգեն աւտասպառ՝ փեթակի գետնին ընկած են լինում և բառացի կերպով գուրս են թափւում որպէս աւելորդ և անշահ ժանրութիւն: Եւ մարածները խոկոյն իրանց օրհասին են հանգիպում:

Մի լաւ փեթակը ամսա ը պէտք է ունենայ 80,000-ի չափ մշակ մեղուները բաղմաթիւն, աէքը ոչ այնպան պէտք է ցանկայ որ շատ փեթակներ ունենայ, որքան պարսը (մեղուների բոլոր) բազմախումք ունի: Արքան փեթակը բաղմացած լինի այնքան արգելները առաջ կը լինի, սակաւախումք փեթակներն իրենք իրանց կերպակել չեն կարողանում, Փեթակը խնամելու մանրամասնութիւնները պէտք է տեղեկանալ ձեռնարկներից: Մենք միայն այս կը յարակցնեմ, թէ մեղուարութիւն սամար ձեռնատու չէ քթոցներ դործածել, այլ անհամեմատ աւելի լաւ է արկդ կամ շարժուն փեթակը, որ հեղինակի անունով Ցիրցոն—փեթակ է կոչւում: Քթոցը յիրաւի աժան, է, բայց արկդի օգտաւէտութիւնը շատ աւելի է գերազանցում: Առանց բանի մեջոցներ գործ զնելու մեղուարոյնը կատարեալ աէք և իշխան է գառնում արկդ—փեթակի, անոնում է ամենայն մանրամատնութիւններ: Ինը ինչ խորամանկութեամբ կարող է յաջողեցնել մէկի պարումային տեղ միւսին նստեցնելու կամ փախանակելու խիստ կարեոր գործը, արգելել պարսելը (մեղուների գունդ գունդ գուրս ելնելը), ըստ հաճայից կարող է ամէն մի խորիսի շրջանակը զատ զատ գուրս հանել, և այլն: Տէրը միշտ սահմանագրական լնքնչշխան է մնաւմ, որովհետեւ ազատասէր մեղուն միշտ թուշում ու աշխատում է, ինչպէս ն'ըր և ո'ըր կամենայ: Կոր սկսողը պէտք է աւելի հեզ մեղուներ պահէ, որնք խայթում են միայն խիստ նեղութեան ժամանակի մինչգեռ ու մեղուները «կատաղի կռւատէր» են և միշտ խայթելու ախորժակ ունին: Փեթակից հեռու ոչ մի մեղու չե խայթի, եթէ չդրգուն, կամ նեղութեան մէջ մինի:

Մեղուարութաւթիւնը հարկաւ միջոց չէ շշուտ հարատանալու համար, բայց 30 փեթակը կարող է անշուշտ նայն իսկ անշաղող տարին, 100 բուրլուց աւելի տալ. իսկ այսքան գրամը շատ է այն քեզ աշխատաւթեան համար, որ տէրը իւր այլեւայլ զբազմունքներն ունենալով՝ պարապ ժամերին և միայն զուազութեան համար դործ գրած կը լինի: Բայց երկարործի, այգեռապանի և պարտիզամանի համար մեղուի կողմանակի օգուարը անհամեմատ աւելի շատ է, ոս նոցա համար միանդամայն անհրաժեշտ է և անփոխա-

րինելի: Կ վերջոյ յիշենք և փառաւոր օրինակներից մէկը՝ որ Դարուինի փոքր չափով փորձերց յետոյ, աւելի մեծ չափով ապացուցել են Ասդիայում, թէ բոլորի բեղմնաւորութեան համար կարեւոր է միջատների՝ և առաւելապէս մեղուների միջնորդութիւնը: Խղիսար կամ ըուրգունքեան կոչուած առույսով ցանած մի մեծ գաշտ՝ բաժանել են երկու հաւասար մասի, մի կեսի վերայ թափանցիկ ցանց փակելով, որպէս զի միայն թուչուոր միջատների ազատ մուտքը արգելուի, և ոչ թէ անձրեի, արեգակի և հոգմի առաջն առնուել, իսկ միւս կէսը արձակ թողնելով, Վերջապէս փառած կողմից կարողացան հաւաքել միայն մի բուռ ու կէս սերմ, իսկ արձակ կիսից գէթ 20՝ փութ ունեմ:

Մեզուի ջանասիրութիւնը մեզ զարմացնում է, մնաք օրնում ենք նորան, որ մեզը է պատրաստում. բայց որքան քիչ մարդիկի գիտեն առնարքանչելի և ամենասօգտաւէտ միջատաքը ենչ անհրաժեշտ և անփոխարինելի արարած է եղել:



## ՀԱՅԿԱԿԱՆ Ք\*

ԺՈՒ

Առակազբերից բաժանուելուց առաջ կանգ առնենք՝ վերջին անգամ՝ մի առակի վրայ, որ հետաքրքրական է ըստ իմ կարծեաց՝ իրեւ արտացոլումն պաւզիկեան կամ թունարակիան վլաճերի: Այդ առակը հետեւալին է Մատի հրատարակութեամբ.

ՄԺԹ. ՔԱՀԵՆԱՑ ԵՒ ՄՍԱԳՈՐԾ

(150 աց—17 Ա—119 Բ—20 Բ)

Ըսի յառակաց, թէ ազքատ էրէց մի զնաց մօտ մսագործն, թէ ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայոցն տանիմ: որ եփեն և ուտեն, իսկ մսագործն ընդ կատակս համարեալ, ետ նմա լիսր մի միս և ասաց, թէ իմ հօրն պատարագ արաւ: Եւ երիցուն ընդ արդարս համարեալ եհարց զնաւ, թէ քոյ հօր անունն ինչ է. և մագործն ասաց, թէ իմ հօր անունն Մկար է, զոր ոմանք սատուրի 10 կոճ տան, և երթեալ երիցուն ի տուն իւր և տարաւ զմիսն տղայոցն. և զնացեալ շի-

նեաց զպատարագն և յիշեաց զՄոկաբն յանուանէ ի պատարագն և ի յազդմանէն աստուածոյ մասգործի կոճն արմատացաւ և առ մենայն առաստաղն խանութին պատառեալ բարձրացաւ։ Խոկ խանութապանն զարհուրեալ զնաց անկաւ յըտս քահանային, թէ զով յիշեցեր ի պատարագն, և նա առեց Մկաբր անունն զոր դու ասացեր, թէ իմ 20 հօր անունն Մկաբր է, Խոկ նորս զայս տեսեալ աղաչեաց կրկն պատարագել և խուսպէս զհայրն իւր յիշել։

Ցուցանէ առակս, թէ մի խարէք զի զօրութիւնն աստուածոյ ոչ արհամարչի և ոչ 25 տկարանայ, այլ յամենայի զօրաւոր և քրանչեալագործ է աստուած (Ո հատ, էջ 245) \*:

Առակիս ուուսերէն թարգմանութիւնը տալիս է Մառը (Ո հատ, էջ 218, § 238) փոքր ինչ տատամութիւններով։ Դժուարութիւն պատճառով սատուրի կոճ=մկաբր բառեն են։ Թէ սատուրը (այժմեան հնչմամբ՝ սամըրը) միս ծեծելու մեծ դանակն է և կոճը այն կոճզր, որի վրայ ծեծում են մի սր, այդ յայտնի է Մառին։ Այսուամենայնիւ նա կոճ թարգմանում է կոթ, այնպէս որ թարգմանութեան մէջ կացնի (գանակի) կոճն է արմանէր արձակում բռնուում բարձրանում և խանութի առաստաղը ծակում մինչդեռ իսկապէս արմաններ է արձակում մօի կոճզր=կոճը ինչպէս ազ երեւում է նաև սոյն պատմութեան երկրորդ՝ աւելի ընդարձակ՝ վարիանից, որ տալիս ենք մենք ներքես մէ Այս փաքրիկ նկատողութիւնից յետոյ անցնիք մեր բացատրութեամբ։

Պաւղիկեան քրիստոնէութիւնը շատ հին է Հայաստանում։ Նոյն խոկ Գրիգոր Լուսաւորչց առաջ ժամանակով Մասնաւորապէտ հարաւ այնին Հայաստանը հարուստ էր այս բրոգրական։ Աղանդաւորներով, որոնք մեր ամրող պատմութեան ընթացքում մինչեւ մեր օրերը չդադարեցան գոյութիւն ունենաւուց չնայելով հալածանքների ամրող խրառութեանը։ Միայն մեր զարում նրանց վիր։

\* Ընթեցուածների տարերութիւնը էնի՞ հշանակած այդ մասմէ դիմել Մատի հաւատակերպեամբ։ Զեսպերից հնագոյնը Յ և Կ գուած 1628 թիվին, միւսներ 17-դ դաւու երկրորդ կիսիցն էն։

զիշների ջանքերով նոր կազմակերպուող «Հայ աւետարանական եկեղեցու» հետ \*։ Կորիւնը, Ղազար Փարակեցու թուաղմբը, Վըրթանէս Քիրթողը, Շանեցին, Անանիա Մոկաբին։ Աւանիա և Գրիգոր Նարեկացիները, Մազիստրոսը, Լատիմիլիացին, Պողոս Տարոնեցին և ուրիշներ, թէեւ միակողմանի, բայց հարուստ տեղեկութիւններ են հասցրել մեզ աղանդի մասնին «Բանապի Ծշմարտութեանը, թէեւ իւր մի քանի մասերով նոր, խոկ ամրողջութեամբը մնորոգուած», թէրին, և աղէտ գրիշների ձեռաքով ռամկացած բնազիր է ներկայացնում։ Բայց անշուշտ ունի հնութեան մեծ հետքեր և զեռ միակ վաւերաթուղթն է, Հայ պաւղիկեան գրականութիւնից մեզ հասած։ Պաւղիկեան վարզապետութիւնը, ինչպէս յայտնի է, ի թիւս այլոց չէր ընդունում աստուածանինի, խաչի պատկերների պաշտամունքը, սրբերի միջնորդութիւնը, հոգեհանգստեան պատարագ, ուստի և զրա հետ սերտ կապուած հոգու — հացը (=քերելս), մատաղ կամ զահ անասաւնների և այլ նմաններ, որոնք Հայ ու զգափառ եկեղեցու մէջ ընդունուած և սրբագործուած էնն, բայց աւելի մեծ ծոխութիւն և բարգաւածում էնն զտել ուամփեկամ կամ աստորին քրիստոնէութեան։ մէջ Տիրող եկեղեցին ստիպուած էր ոչ միայն հերքել \*\*, հալածել և ջնջել աղանդաւոր

\* Իմ մի ժամի տող նկատողութիւնս Պաւղիկեան պատմի ուսումնասիրութեան կանուռութեան մասմէ անձեւամբ լանցան եւ ասիր հովան ընդարձակ հետազօտութեանց։ Տես մասնաւուակս Կոնդրիի վերջին աշխատութիւնը, որի մէր բացի միդիմակի նիմեական մանրամասը ուսումնասիրութիւնից հետարակութեան մական «Ծանրութեան Բանալու» հայ բնագիրը իմ ընդուժմակերպեամբ և Կոնդրիի անդեւէն բարզմանութեան ի այն ճարմի վերաբերեալ յակըսածներով։ Fr. C. Conybeare, The Key of truth, a manual of the Paulician church of Armenia. The Armenian text edited and translated with illustrative documents and introduction. Oxford, Clarendon Press 1898. CXCVI+201, 8<sup>o</sup>. Այս հատուակութեամբ մասմէ տես և P. Wendland-ի թեսադասականը Byzant. Zeit. 1900, էջ 197.

\*\* Այդպիսի նկատմանը մէջ ոչ անձնան տեղ են բռնում նաև անձները և զաղիւ պֆուրիւթեամենի շիմու պատմութեամենը, ուստի վիւացւուամ էին Թունդրակեցիներն և իմասկ այդ մեսն և ինք Մագիստրոսի քրիտից։ Անմէ բայց հայտնուած իրունկիմ վիճակուած է հղիւ

վարդապետութիւնը և նրա գրուածքները, այլ և միւս կողմից դայթակղուած մաքերը շինելու և ընդունուած հաւատալիքների մէջ ամբազնդելու համար պիտի զիմքը բացի բերանցի քարոզութիւնից նաև զրաւոր դէնքի, տեսիլքների, հրաշապատումների, ինչպէս որ պահանջում էր ժամանակի ձաշակը և քաղաքակրթութեան չափը: Բաւական բազմաթիւ են մեր հին մատենագրութեան մէջ այդպիսի տեսիլքներ և հրաշապատումներ: որոնք ուղղուած են՝ առանց անու ան

այդպիսի գրաֆուուրիանց նշաւակ դատնալ, ինչպէս որ հայ եկեղեցին էլ յուր կողմից մեղագուի և յոյն առաջաւամ եկեղեցիներից այնպիսի այլանդակութեան մէջ, իմաստին է օրինակի համար: այդ Սարգիս շան պաշտութեան մէջ այսպիսի առաջարկ է միանդադար ազգական պատուի առաջարկ է ամենամերես ուղարկող պատման: Երբեմ առուրիս դնաւ ինքն այսպիսի այդպիսի մը շատ սկս բայց հիմա բրդական գուածից ուղղուած թանրակեցների դէմ:

### (Կարմիրադեղով հազիւ վերծանելի)

Ա.ասն հերձուածողաց բանք և զրոյցը, իրեն առասպելարանութիւնք, Քանզի ի մէջ միում հայոց գրքի տեսի զայս յառաջակաւ գրեցեալ բանքու, որ զգիրն հայերէն էր և զրանքն հայերէն: զամ այնորիկ և հս այլ առեալ գրեցի ի մէջ զայս գրքիս իրեն զօրինակ: բայց զայս ոչ եթէ ճշմարտապէս գիտելով և հաւատալով, այլ միոյն թէ զինի իմայ եկողացն տեսութիւն լիցի: որ բազում հարցաքննութեամբ: հարցանիցն յամենայն աղջաց քրիստոնէից և տեսցին թէ ճշմարտապէս եզեալք են զայս բանք և զրոյցքութէ ստայօդ առասպելարանութիւնք են: Ա.ասն նորոյ խնդրեմ է ձեւջ զի անմեղագիր լինիւ ջիր յինէն: քանզի որպէս տեսի զօրինակին աշյուպէս և հս այլ գրեցի: Քանզի ամենայն ճշմարտ բանք միոյն առաւուծոյ է գիտելի, այլ և կատորեալ իմաստուն փիլիսոփայից և վարդապետաց հին և նոր Կոտակարանաց և հմտագունից: Խոկ որք հաւանեցին՝ զօրինակն առցին և ընթերցցին: ապա թէ ոչ՝ անընդունակ լիցի: իրեն առասպելաց առասպելու:

Եւ զիտելի է թէ զի նչ են հերձուածողք և կամ ուստի ընծայեցան: Պատասխանեալ զայս գրեմ: Քանզի սատանայ և հետ զթիւն իւր ի խուարի որպէս Զեղեւուն ի ձար զփայտէ կախեալ: Խոյն օրինակաւն յղացեալ ծնաւ սատանայ զինակարն կային ի ծառ:

յիշատակութեան՝ պաւզիկեան վարդապետութեան դէմ: բայց մինչև այժմս չեն հասկացուել և չեն զնահատուել ինչպէս որ հարկն է, մինչդեռ մեծ նշանակութիւն ունին ոչ միայն կ օնական-պատմական տեսակետով, այլ նաև թանկագին են մեր քաղաքակրթութեան պատմութեան համար: Այդպիսի տեսիլքնե-

Կային յղացեալ ծնաւ զՍիդղ շունն երեք զըլինէն: որ երկու գլխովն որսայր և միւսովն ուտէր անյս գարար և ոչ կարէր յագենալ. 10 Նշն օրինակաւն և Մանիքեցին, որը կամէին զքրիստոնեայսն մոլորեցուցանել ի ճանապարհը իւրեանց: Եւ ապա Սիդղ շունն յղացաւ և ծնաւ զԱւշկապարեկն: Եւ Հաւատոց Արմատըն ասէ զԱւշկապարեկն: թէ զլուխ նորա է որպէս շան, և ականջ նորա որպէս իշոյ: և կնճոյթ նորա որպէս արագլոյ: և ոտք նորա որպէս փող քբոց, և ի միջացն ի խոնարհ որպէս կին պատշաճաւոր, լի գործովք անօրէնութեամբ: թեւուր, քաղցրածայն: և յոր- 20 ժամ ձայնէ ի ծովուն և զնէ զբերանն իւր ի թեւամէջն: այնչափ ձայնէ, զի յորժամ լսեն նաւագարբն զձայնն: գագարեցուցանեն զնաւոն, որ ի ծովն են: Եւ կանայքն որ ի ցամաքի են: իրեւ լսեն զձայնն զյղութիւնն ընդ մէջն անցուածն անցուածնն: Խոկ անիծեալ թագաւորացն պարսից՝ Վ.էնն և Վ.նուկն, ելեալ ի յորս և լուան զձայն նորայ և եկին առ նաւագարբն և ասեն: ո՛վ եղբարք, որսացէք մեզ զգագանն զայն, զանուշաճայնն և զզար- 30 մանալին և մեք տամք ձեզ մինչև ցկէս թագաւորութիւնն մեր: Խոկ նաւագարբն ելեալ մեծաւ ջանիւ ի յորս և բերեալ սատանայի զէզն Աւշկապարեկն: և եհան ընդդէմ նոցա և նորա առեալ բերին զպիզծ գաղանն առ պիղծ թագաւորացն Պարսից: Եւ տեսեալ զարմացան: և ցանկացան նմայ և զալտ ի միւսանց շնացան երկորինն ընդ Աւշկապարեկն, անիծեալ թագաւորքն: Խոկ անիծեալ յԱւշ- կապարեկն յղացեալ ի սերմանց անիծեալ թա- 40 գաւորացն ծնաւ զՊոպոզն մարդ: Խոկ անիծեալ Պոպոզն ծնաւ չարաշունչ և չարածայն, չարանիւթն և չարագնացն: չարագէմ և չարամիս: զի և զիրք մարդագէմ գաղան անուանն զնայ: Խոկ Պոպոզն ծնաւ զանիծեալն 45 Մանէս և անիծեալն Մանէս ծնաւ զՄանակ, և անիծեալն Մանեակ ծնաւ զՄանի: Եւ անիծեալն Մանի ծնաւ զՍիմն կախարգն: և անիծեալն Սիմն ծնաւ զՃանկու: և անիծեալն ճանկու ծնաւ զԱշեցին: և անիծեալն 50 Աշեցին ծնաւ զԿաշեցին: և անիծեալն

րիցն է, օրինակի համար, «արոս թարգմանեցն Սահակայ և Մեսրովպայ աշակերտ» \* հոգեմաս Խաչիկ վարդապետինը: Այս պահն էլի Խաչիկ վարդապետը շրջուն քարոզիչ էր: Ասուածայայանութեան տօնին հանդիպեց Ակոսի ղիւղը Մասեաց-Ռաքում: այժմ կոր ծանուած, իսկ երբեմն համբաւաւոր իւր այ-

Կաշեցին ծնաւ զԹռնարկեցին: և անիծեալ լլն Թռնտրկեցին ձնաւ զՊոլիկեանն: և անիծեալն (զ)Պոլիկեանն ծնաւ զՊարտէպաշտն: և անիծեալն Պարտէպաշտն ծը-  
55 նաւ զԱրևապաշտն: և անիծեալն Արևա-  
պաշտն ծնաւ զՄանէսն: և անիծեալ Մա-  
նէսն ծնաւ զՔերքաջն: և անիծեալ Քեր-  
քաջն ծնաւ զՄազքողն: և անիծեալ Մազ-  
քողն ծնաւ զՓասքողն: Սոքա ամենեքեանն  
60 զգործ սատանայի ունէին և զծնունդն նոցա-  
զի սոքա ոչ ծառայեն Աստուծոյ կենդանոյն  
և անհասին, անձառելցյն և անպատճին, այլ

\* Այդպիսի փիտոսից լոկտի և խարուիլ: Շատեր հետ համարուն տուած այդ յինուոր՝ Մեսրովրայ և Սահակայ աշակերտ: Յայտնի է որ գրոյններ ժամանակագրութիւն յունին: Շատ ժամանակ յէ անցել, որ բարգմանաց աշակերտ համարուն և Թովմայ Ուժուուին: Թարգ-  
մանաց աշակերտ է, երկ Յայտմաւուրին նայիմ: Ժմու-  
նուորդ դարում ապրող Ասեխանու Տարօնեցին, մակա-  
նուաննալն Ասոդիկ, ևն սեպտեմբ. 17, «Եիշատակ սրբոց  
Թարգմանացն Սահակայ և Մեսրովրայ աշակերտուուրու: որի էրկ ներկեցի և զիսաւոր յաշակերտաց նու-  
ցաւ այսուիկ: Սուրբն Յովսկի և սուրբն Դեւնդ երկց,  
որի Պարս վկայեցին սուրբն Եղիշէ վարդապետն և Մով-  
սկու վկայեցին սուրբն Մովսէսի Մամրէ վերծա-  
նող: և Եղանակ կողման կողման Ասոդիկ, Խոս-  
ուրայ և Դապար պատճագիր, Արծան և Կորին և Դարիր  
անցադոր փիդիտփայ, ընդ որս և այլ բազումին: Կամ  
փիւր, 19: Մեսրովրայ վարցում: «Եւ յէս փոխեան սրբոյն  
կիմ աշակերտն Առա յերենայ ճնշացեալ և փարամա-  
ցեալ ու մամար: Մովսէս թարոդ և Դարիր անցադոր փի-  
դիտփայ, Մամրէ վերծանողն և Եղիշէ պատճագիրն,  
Դապար Պարպեցին և Եղանակ և Ասոդիկ և այլ ուման:

Տես և Տաշեան ցացակ էք 60, 94, 344, եւլ: Մեր  
կիմ դարձեց յարգի Օս: Մախանան իւր ուր ու-  
սումնասիրուրիան մէշ, (Աերկոսի Պամարիւմը և Մ.  
Խորենացի, Թիմիլիս, 1899) ընդունում է եւկու Աս-  
եխանու Տարօնեցինը սոսիմը աշակերտ սրբուն մէ-  
թե սունդ պատճագիր Ասէփ: Տարօնեցին է այլ պատճա-  
գիր կայ միայն և այն պատճագիր Ասէփ: Տարօնեցին է  
աշակերտ: Սահակայ և Մեսրովրայ: Բայց Խորենու  
խանուն մէն դարձեցի կողմէ յինի գնել ուրեւու ախրա-  
ւական գրուածքներու: Թարժ Հայից եկած գալրականնե-  
րին մէր մինչեւ այսօր էլ պահուած է եւկու փաղաշական  
կոյունիւ որ պահուած էլ յարսանի մանուկներին՝  
չչար յարխանու և աւելի յամափ գածածուած սահա-  
կայ պարզիկ: Զար-յուիհանուր Յովհանու Ուրացոյի յի-  
շատակն է, իսկ սահակայ-պարզիկ՝ պաւլիկանների:

գիներով: Գիշերը աեսիլք աեսաւու ահա կեն-  
դանացել են մեռածները, փառաւոր և պա-  
տուական մարդիկ, և բա մած են մի մեծ և  
վայելուչ գարպասում: Նրանց առաջը բարելի  
սեղան է զրուած, ամեն աեսաւկ աղնիւ կե-  
րափուրներով և ըմպելիքներով: Մեծ և փոքր  
ամենքն ուտուում են եւ ըմպում ամեծու ու-  
րախութեամբ, և «փոյելչանուու ենց Դրանցից

սատանայի, և պաշտելիք նոցա զոր պաշտեն:  
Նզովեալ եղիցին յամենասուրբ Նրբորդութե-  
65 նէն և ի մի Աստուածութենէն: Ամէն, և ե-  
ղիցի, և եղիցի \*:

«Թարձեալ՝ ժողովն որ եզկ ի Հոռոմ  
յաղագս Սիմոնի կախարդին: քանզի ասէր  
Սիմոն զանձնէ իւր, թէ ես եմ որդի աստու-  
70 ծոյ: որ խաչեցայ և թազեցայ և յարեայ, և  
ապա ասէ պեղձն ցժողովն, որք կային ոգիք  
իրրե երկոտասան րիւրը, որ է Ճ՛ՌՌ, թէ շի-  
նիցէք ինձ աշտարակ բարձր, որ ելանեմ առ-  
հայր, և շինեցին աշտարակ բարձր մինչեւ  
75 ցյօքս, և առեալ զնա խաւարույին զիւացն և  
ելեալ ընդ աշտարակն աներեւոյթք եղն: Եւ  
ժողովուրդքն զկնի նորա ազազակէին և ա-  
սէին: զի ահա Արմոն, որդին Աստուծոյ: վե-  
րացաւ յերկինս: Յայնժամ Պետրոսի և Պո-  
80 գոսի կացեալ յազօթս յատենի և ասէին:  
զի ահա այսպէս աշխարհս ամենայն գնաց  
զկնի նորա մոլորութեանն Սիմոնի կախարդի:  
Արդ եկայք յազօթս արասցուք, Եւ եղեալ  
ծունդը կացին յազօթս մինչև յինն ժամն,  
85 և յայնժամ խաչ հանեցին ընդգէմ նորա, և  
ասեն ընդ խաւարոյին իշխանն և ընդ գոր-  
ծոզն անօրէնութեան Ոչ ունիք իշխանու-  
թիւն այլ բառնալ զգայ և տանել ի զիր, և  
առ ժաման զեքն ժողին զգիզնն Սիմոն և  
90 ընկեցին ի վայր, և պատառեցաւ ի չորս մա-

\* Այս տարօհինակ ծննդարանուրեան մէշ՝ Պապոցը  
երեխի առնուած և պիկուազցիների աղամեջի անունից, Աշեցի, Կաշեցի, Թունտէկիցի: Պաշիկեամ՝ Պատիկեանների  
աղամեջի զանազան անուանակուուրիններն են: Արեւա-  
պազ, Պատիկազ՝ Արեւորդիների մասին և տառած:  
ուսոն մէշ կար բարդու պաշտամունիք: Աւելի հետարքա-  
կան և ճականու Բերգաչ, Մազոս, Փասոս անունները,  
ուսոն բացատրութիւնը կուրեի յինի զնել ուրեւու ախրա-  
ւական գրուածքներու: Թարժ Հայից եկած գալրականնե-  
րին մէր մինչեւ այսօր էլ պահուած է եւկու փաղաշական  
կոյունիւ որ պահուած էլ յարսանի մանուկներին՝  
չչար յարխանու և աւելի յամափ գածածուած սահա-  
կայ պարզիկ: Զար-յուիհանուր Յովհանու Ուրացոյի յի-  
շատակն է, իսկ սահակայ-պարզիկ՝ պաւլիկանների:

շատերին անձամբ ձանազում էր Խաչիկ վարդապետը և գիտէր որ մեռել էին: Ծեսաւ ահա վայելու դարպասից դուրսը ակռուցի Ղաղարին, տխուր և տրառմ դէմքով, ձեռքը ծնօտին դրած նստել է: Այ մարդ, հարցրեց Խաչիկ վարդապետը, ինչո՞ւ ես գուրսը մնացել, ինչո՞ւ չես ուտում չես ըմպում և չես վայելանում: Որովհետեւ, պատասխանեց Ղաղարը, բարի յիշատակ չունիմ միւսների պէս, որոնք վայելում են իրենց յետմացների տուրքերն ու բարի յիշատակները, իսկ ես անիծում եմ իմ յետմացներին: Ես Ակոսի գիւղի տանուտէրն էի, անունս Ղաղար է, մի Դաւիթ անունով որդի ունիմ մեռնե-

լիս թողել եմ շէն տուն, լի ամեն բարութեամբ և վեց հազար զեկոն (գահէկան) արծաթ, իսկ նա, Դաւիթը, ինձ բնաւ չմիշեց աղքատներին ողորմութիւն և քահանաներին տուրք տալով այս պատճառով էլ տըխուր և տարակուսած եմ և անիծում եմ որդուս: Այս տեսլիքը տեսաւ Խաչիկ վարդապետը մեռելոցի զիշերը, միւս օրը պատմեց եկեղեցում Դաւիթն հրապարակաւ խոստովանեց իւր մեղքը, մատաղ կտրեց և մեծ հօգու—հաց սարքեց, արա՛ բազում զենմունը խոյոց և զուարակաց, պաշտմամբ և պատարագօք, և կերակրեաց զբազումն զանազան և համեղ խորտկօք և անոյշ ըմպելեօք: Հոկ Խաչիկ վարդապետն էլ իւր կողմից դար-

սըն, և ել ի փորոյն նորա վիշապ մի զազրալի, և վեց գեք ելին ի նմանէ զինի վիշապին, որոց անուանը են այսգիկ. Գաթրոն, Զորշան, Զսուրը, Զորին, Զսուրդն, Շիդարն:

95 Սոքա աշակերտը էին անիծելոյն Սիմոնի և կարապետ նեռինն պղծոյ և անիծելոյ: Ապա ետ բերել անիծեալ կինն Սիմոնի և տայր մատուցել, ի ժամանակի պահելոյ նորա. և բերեալ ս(ե)ան մի պղնձի և շուն մի սկ զերոյր ի նմայ, և բերեալ օձ մի զենոյր ի նմայ, և բերեալ աղաւնի մի զենոյր ի նմայ և բերեալ սերմ արանց և զախտս կանանց և խառնէր ի նոսաւ, և զայն արարեալ ճիճոյ անիծեալ թոնտրկեցիքն և յիւր անիծեալ ժողով:

100 105 Վուրդքն, զփսիսան սատանայի ուտելով գիտուն լինէին իրեւ զսատանայի, և զշան արիւն ուտելով տիրասէր լինէին իրեւ զշուն, զօձուն արիւն ուտելով՝ խորագէտ լինէին իրեւ զօձ, զադաւնոյն արիւն ուտելով միաւնիտ լինէին իրեւ զադաւնի, զզառին արիւն ուտելով՝ խոնարհ և հանդարտ լինէին իրեւ զզառն, զսերմն արանց և զախտս կանանց ուտելով՝ ոչ ի մօրէ գարշէին և ոչ ի քուրոչէ, Այլ անիծեալ լիցին ի Քրիստոսէ թոնտր

110 115 120 125 Վուրդքն, զփսիսան սատանայի ուտելով գիտուն լինէին իրեւ զսատանայի, որը զանձինս իւրեանց խաչ և եկեղեցի անուաննեն, և յորժամ շար առաջնորդն իւրեանց սատակել կամի՛ բերեն կոյս մի գեղեցիկ օգեցուցանել ընդ նմայ, և ախչիկն թէ արու ծնանի և թէ էգ, իջուցանն զնա ի ջուրն, որպէս թէ միածին որդին եկն ի մկրտութիւն: Դարձեալ՝ հանեն զնա ի խաչափայտն, բերելով օրինակ խաչելութեանն Քրիստոսի և տան նմայ լեղի և քացան մինչև սատակի, և իջուցանն զնայ ի գերեզման և յետ երից աւուրց յարուցանն զնայ, ի տեսութիւն ամենայն ժողովը

գեանն: Դարձեալ՝ յետ այսորիկ խորովեն զնա և տան ուտել զկէսն իւրեանց չար առաջնորդին՝ որ նստուցանել կամին և զկէսն զնեն ի բարձրաւանդակ լիրինն, և զկէսն զնեն ի յերգուտանեցն և յորժամ յաղօթս մատուցանեն, և ասելով այսպէս. Միածին որդին, որ ի վերդես ուղորմեաց անձանդ Թոնտրըկեցեացն:

Արդ՝ գուք հաւատացեալք ի սուրբ Երանցութեանն, եթէ ասեն անիծեալ Թոնտրըկեցիքն՝ եթէ խոստովանիմք զհայր և զորդի և զսուրը հօգինն, գուք այսպէս ասասջիք նուցա համարձակ ձայնիւ և անդադար բերանով, Հայրն երկնաւոր, անձառելի և անհասանելի:

130 135 140 145 Նզովեսէ զհայրն Թոնտրէցեացն: Որդին Միածին, որը յերրորդութիւնն անբաժանելի է՝ նզովեսէ զորդին Թոնտրէցեացն: Հոգին Ճշմարիտ, որ աղաւնակերպ իշմամբ վկայեցաւ ի հօրէ ի վերայ որդոյն նզովեսէ զհոգի և զմարմին Թոնտրէցեացն:

Արդ՝ գուք զգուշ լերուք յաղանդոց նուցա, աստուած փրկէ և ազաւէ զմեղ և զամենայն քրիստոնեայնն, որ անկանիցի ընդ նոցա ի մեղս մեծամեծս, ի ձեռս աղանդոց նոցա և ի պիղծ ճիճուէ նոցա ուտիցէ, թէև Քրիստոս եկեալ վերատին խաչեսցի, այլ ոչ ևս փրկեսցի մարդն այն, և ոչ զերծանի յաւիտենական տանջանացն: Միթէ ողորմանն և մարդաբուժութեան աստուած փրկեսէ զմեղ և զամենայն հաւատացեալսն անուանն իւրոյ ի չար աղանդոց Թոնտրէցեացն և ամենայն հերձուածողացն, Ամէն,

150 155 160 165 Վուրդքն, ուղորմանն և մարդաբուժութեան աստուած փրկեսէ զմեղ և զամենայն հաւատացեալսն անուանն իւրոյ ի չար աղանդոց Թոնտրէցեացն: Միթէ ողորմանն և մարդաբուժութեան աստուած փրկեսէ զմեղ և զամենայն հաւատացեալսն անուանն իւրոյ ի չար աղանդոց Թոնտրէցեացն:

Վուրդքն, ուղորմանն և մարդաբուժութեան աստուած փրկեսէ զմեղ և զամենայն հաւատացեալսն անուանն իւրոյ ի չար աղանդոց Թոնտրէցեացն:

Առաջ տեսիլք տեսաւ և ահա տանումէր Դարպար խառնումէր էր զարպասում նսաածների հետ և ուրախ գէմքով դոհանում էր Աստուց և օրհնում իւր Դաւիթ որդուն։ Այս տեսիլքով տպացուցում է հոգու հացի անհրաժեշտութիւնը, որին գէմ էին թանգրակեցիք։ Եթշենք, օրինակ, Հասախիւրացու պատմածը Հարքայ Յակոբոս եպիսկոպոսի մասին, որ ուսուցանում էր ի միջի այլոց՝ մէկ որ ինքն իւրով անձամբն որով մեղան և նովիմք չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ պատարագք։ և իւր համախոհների հետ ծաղրում էր հոգու հացի մատաղը ասելով. «Այ տառապեալ չորքոտանի, թող թէ նա (=հանգուցեալը) զիւր ժամանակն մեղս արար և մեռաւ, զու զի՞նչ մեղար որ ընդ նմա մեռանիւ» (Դղ. ՌԲ)։ Հարկու չէ կարելի պնդել, որ հագետն Խաչիկը և Թանգրակեռն Յակոբոս եպիսկոպոսը ժամանակակիցներ են, բայց անտարակուսին է, որ երկուսը հակառակորդներ են իրենց քարոզութեամբ։ Համոզմունքներով և գաղափարներով։

Ճիշտ այսպիսի մի հակապաւդիկեան հատուած է քահանայի և մագործի առակը, որի բարոյականն այն է, որ հոգեհանգստեան պատարագը ոչ միայն շահաւոր է հանգուցելոյ համար, այլ եթէ նոյն իսկ այդ հանգուցեալը մի մասի կոճ լինի՝ կարմատանայ և ճիւշդիր կարձակէ։

Այդ պատմութեան ընդարձակն ունինք, իրու հրաշագործութիւն Տէր Յուսկայ որդի Ստեփանոսի։

Տէր Յուսկայ որդի Ստեփանոսը մի պատմական անձնաւորութիւն է, մաքրակինցագ, սուրբ ճգնապետ կրօնաւոր և միանգամայն ժամանակակից՝ առակների նախհեղինակ Վարդան Այգեկցուն։ Յայսմաւու բըները յունուարի 3-ին ունին այս Ստեփանոսի շատ գեղեցիկ վարքը։ Տէր Յուսկի քահանան Տօսր զաւակի Արտամէտ զիւղիցն էր Հայոց 673 (=Քրիչական 1224) թուին Թաթարների արշաւարքի ժամանակ գերւում է Տէր Յուսկան կինը և Թաթարիզում զածաւում է մի բողաւագ տիկնոջ։ Գերող Թաթարը ճանապարհին հիւանդ լինելով ազատ

է մնում խառնակութիւնից։ Նոյնպէս ազատում է և բոզանոցում՝ փոխարէնք «կերպաս նկարելով» այսինքն է տապրեշում բանելով։ Տէր Յուսկի մուրացիկի շորեր հազար, Թաթարիզում զանում է կնոջը, թոզաւագ տիկինը, որի անունն էր Բիբի, ոչ միայն ծրի ազատ է թողինում իրիցնկանը այլ և քահանային տալիս է 500 գեկան, ասելով։ Աստուած քեզ որդին է աալու և այն քահանայի է լինելու, խնդրում եմ քեզնից, որ քո որդուգ առաջին պատարագը ինձ տաս, իմ մեղքերի քաւութեան համար։ Տէր Յուսկի խոստանում է և վերագանուում է կնոջ հետ Արտամէտ ծնում է «տմրիծ աղաւնի» Ստեփանոսը, կրթուում և վարժուում աստուածապաշտութեան մէջ։ Սուրբ պարկեշտ, համբերող, տւումնակը և լռակեաց, այլև աղքատասկը և հլու։ Հասնելով արրունքը, ջրթափելով սկսում է տան գործեր կատարելու Մի օր զբաստին բարձած խորդով ցորեն է տանում Անգղ զիւղի ջաղացքը աղալու։ Այդ տարին հացի սղութիւն էր և աղքատները սաստիկ տառապում էին։ Ստեփանոսը կուց կուց բաժանում է բոլոր ցորենը աղքատներին, խուրջինը մնում է գատարկի։ Հօրից երկիւղ կրելով՝ ծածուկ լցում է խորզը մանր աւազով և գերմակ մօխրով և վերագանալով Արտամէտ գրաւարն այդ բեռագ անում է բակը, իսկ լինքը փախչում է Բերկիր։ Տէր Յուսկի ցած է առնում միամտութեամբ բեռը իշուց, իրիցինն այդ հրաշալի ալիւրից հաց է թիսում։ բայց Ստեփանոսը չկայ։ Մորմօքելով երկար որոնում են կորած Ստեփանոսին, միւս օրն այդ նպատակով հայրը գնում է Ոստան, իսկ մայրը վանեն բայց գատարկաձեռն վերադառնում են։ Այսպէս տասն օր անմխիթար տրամութեամբ անցնելուց յետոյ աեղեկանում են որ Ստեփանոսը զնացել է Բերկիր։ Հայրը գնում է և գտնում է որդուն Արգելան վանքում և միմեանց պատմում են բոլոր անցած զնացածը։ Քուրձի մոխրի հրաշալի ալիւր գառնալը իմացւում է։ Մայրն էլ գալիս Ստեփանոսին տեսութեան, որովհետեւ վերջինս հրաժարում է Արգելանից գուրս գալ ուր և ճգնելով արեզայ է

գտանում: Առաջին պատարագին յիշում է բողաւագ Բիրի տիկնոջը և ահա աչեղ տեսիլք է տեսնում Երևում է նրան արեան ծով\*: Բիրին մէջը, իսկ ինքը ծովի եզերը: Պատարագի աղօթքները կարդալիս՝ հետզետէ դուրս է գալիս Բիրին ափ արեան ծովից՝ անաղտ և արիւնից մաքուր: Պատարագն երկարում է երկու պատարագի շափ և 8էր Ստեփանոսը հրաժարում է այլես պատարագ անելուց, ասելով որ չեմ կարող զիմանալ արեան ծովին: «Այն միայն պատարագաւն եկաց, ասելով թէ Արեան ծովին ոչ եմ կարող ընդդիմ կար: Ամբողջ կեանքը մնալով Արգիլանում եղաւ ճշմարտութեան վարդապետ և երկար ապրելով \*\* առաքինի վարքով վախճանուեց:

Տէր Յուսկայ որդի Ստեփանոսի այս մեր համառօտած վարքն ունին բոլոր Յայսմաւուրքները թէ ձեռագիր (մեր մատենագարանում 30-ից աւելի) և թէ ապագիր: Ստեփայն երբորդ՝ այն է վերջին տագագիրը (Կ. Պօլսում 1834 թուին) թիւրիմացութեամբ միայն համարում է ընտրելազոյնը: Իրեւ թէ լինելով Տէր Խաբայելի հին և ընտիր օրինակից, մինչդեռ բոլորովին նոր խմնագրութիւնն է Փեշամալճեանի գրչից: Ուստի և այդ հրատարակութիւնը բնագրական տեսակետից զուրկ է որևէ նշանակութիւնից: Արդէն հրատարակիչներն յառաջարանում խօսուփանում են, որ սրբազրել են. Մեք յրնթացս սրբագրութեան այսր մատենի կամուլու մտօք զհեա զնացաք այնմ հնագոյն և ըստրելագոյն օրինակի Յայսմաւուրացն Ելիլիկից: անփոփոխ պամելուվ զգյացութիւնն պատմական...», գրքի ճակատումն էլ կայ հետեւալը, կամօք և հաւանութեամբ Ազգային ժողովոյ նորոգ սրբազրեալ և զգու-

\* Հմետէլ. Վարդպատրիկի արեան ծովի տեսիլք Հացունեաց Խայի Պատմուրեան մէջ:

\*\* Աւցերեամբ լցիսեմ ինչ աղիւրից առնելով, Ստեփանոսի մահը դնում է «յամի իր 1251—2»: Մինչդեռ այս սուրբը ծնուած լինելով 1224-ից յետոյ՝ հազի 25 տարեկան կիմեկր 1250 րուին, որ յէ նշանակում երկար ապրել: Ստեփանոսի մահը հաւանականարար տեղի ունեցաւ 13-դ դարու վերելում (տես Աւգ. Լիակ, Վարդ Մըր. հատ. Ժր. 354):

շաւոր ապազրութեամբ ի լոյս ընծայեալու: Թէ որչափ անփոփոխ է պահուել նոյն իսկ պատմական զոյացութիւնը՝ այդ կարելի է դատել օրինակ, մեր այս Ստեփանոսի վարքից: Այդ երբորդ հրատարակութեան մէջ գուրս է ձկուած թաթարաց արշաւանքի թուականը: Թաւրիզի անառականոցը գարձել է ամիրայի տուն, բողաւագ Բիրին՝ պատուաւոր ամիրայի կին. «և տարեալ [վիրից-կինն] ի Դաւրէժ վաճառեցին ամիրայի ուժեմն այլազգեաց, և զի տիկին ամիրային՝ Բիրիի անուն՝ քրիստոնեաց էր հաւատավով՝ յանդորրու կալաւ զնա ելու: Գրուածքի իմաստն էլ խեղաթիւրուել է և արեան ծովի տեսիլքն անհասկանալի է գարձել՝ քանի որ յարտնի չէ Բիրի տիկնոջ անբարոյական արշեստը և մեղքերի ծանրութիւնը: Սրբագրողների բարեպաշտական նպատակն է եղել անշուշտ՝ լոկ միայն մեծ ժամուց տալով, առանց զզալու, առանց չար գործից հեռանալու, պատարագչի անձնական սրբութեամբ միայն արդարանալու անհեթեթեթիւնը մէջ տեղից վերցնելը: Որովհետեւ խսկապէս վարքի մէջ չէ էլ ասուած, որ Բիրին 500 գայհեկան ժամուց տալով և գերի կինը ձրի արձակելով ետ կեցաւ իւր վատթար զրագմոնքից և կամ թէ զզալոց, այլ շեշտուած են միայն պատարագչի բարեպատմութիւները: \*

Բազմաթիւ ձեռագիր Յայսմաւուրքներից միայն մի երկուաը Ստեփանոսի վարքից յետոյ անմիջապէս աւելացնուած են մեզ հետաքրքրող կոճիկի հրաշքը, որ մի ընդարձակ խմբագրութիւն է վերեն առաջ բերուած առակի: Այս հրաշապատումը վարքի հեղինակինը ըշպէտք է լինի իմ կարծիքով, որովհետեւ վարքումն ասուած է, որ Ստեփանոսը արեան ծովի տեսիլքից յետոյ այլես բնաւ հրաժարուեց պատարագ անելուց, մինչդեռ կոճիկի պատմութեան մէջ նորից է պատարագ մատուցանում: Ահա այդ հրաշապատումը.

\* Տպագիր Յայսմաւուրքների մասին տես Զարք. Մատենագիտուրին 446, այլեւ ընդհանրապէս Յայսմաւուրքների մասին Աւգ. Լիակ, Վ. Ս. հատ. ԺԱ:

ԱՆՏՈՒԹԻՒՆ ՄԻՒՆ ՍՔԱՆՉԵԼԵՌԱՆ ԵՂԵՑՈԼ Ի ՍՈՒՐԲ  
ԱՐԴՈՎԵՏՀԱՆ Ի ՑՈՒՆԷՆ ԱՍՏՈՒՄՈՑ ՏԵ՛Ր ՑՈՒՄԿԱՑ  
ՈՐԻԿՈՑՆ.

Եւ եղեւ ի վրդովման ժամանակաց և յաս-  
պատակմանէ հինից այլազգեաց, ելանել սուրբ  
վարդապետին յերկրէն Տարբերունոյ ի սուրբ  
մենաստանէն Երգիշանայ և գնալ ի լեառն  
5 որ կոչի Խաչըլուի, և անդ առանձնանալ ի  
սուրբ անապատին, որ կոչի Երերնավանք: Եւ  
անդ կատարէր զաստուածահաճոյ վարս իւր,  
Եւ քանզի ոչ թաքչի քաղաք որ ի վերայ  
լերին կայցէ. այլ ելանէր համրաւ ճգնողա-  
10 կան վարուց նորա ընդ ամենայն շրջակայ գա-  
ւառուն: Եւ դային առ նա ամենայն ախտա-  
ժետք և ցաւագնեալք, և ըստ հաւատոց իւր-  
բանց գտանէին զբժշկութիւն հոգւոց և  
մարմնոց: Եւ այլքան տարածեցաւ համրաւ  
15 սքանչելազործութեան նորա, մինչ զի այլազ-  
դիք և մահմանականք ևս լուսեալ զարմանա-  
յին: Եւ ոմանք ի նոցանէ հայհոյէին: սուս և  
խարերայութիւն կարծէին: Եւ մի ոմն յա-  
նաւերինացն: ի բերգէն Ամկոյ, արուեստիւ մաս-  
20 գործ, կամեցաւ փորձել զսուրբն Աստուծոյ,  
Եւ եղեալ գնաց առ սուրբ վարդապետն յանա-  
պատն Երերնոյ, քրիստոնեայ անուանելով  
զինքն: Եւ ասէր ի մոխ իւրում: եթէ հոգեոր-  
թշկութիւն և օգուտ ոչ կարեմ իմանալ և  
տեսանել, այլ կամիմ մորմնական ինչ կերպիւ  
փորձել զաքանչելեաց համրաւ քրիստոնէից:  
Եւ գնէր ի միտո իւր զիոնն զոր գործէր մինն  
ի վերայ, հայր իւր անուանեաց. և ասէր  
եթէ ի կոճո այս երեսի սքանչելիք, ապա զի-  
50 տացից եթէ Ճշմարիտ է հաւատն քրիստո-  
նէից, և համրաւ սքանչելեացն Քրիստոսի:  
Եւ հասեալ առ սուրբ վարդապետն: և իրեւ  
զքրիստոնեայ երկրագութիւն մատուցանէր,  
և հայցէր ողորմութիւն ի նմանէ: և բաժին

\*\* Այս հրատակութիւնն անում եմ երկու Յայ-  
մառութից՝ Ամեր մասնադարամի № 1847, 1, գործած  
1860 րուից յեսոյ, Բ-մի այլ անրուակն Յայմառուց  
1665 րուից յեսոյ գորուած: որ դեռ յէ մենք Մատենադարա-  
նի ցանքը եւ ցանւում և հայի վարդապետի մօս: Բ-մ  
ունի այսպիսի վերացիք: «Պատմամ իւ միւս այլ սիս-  
տիմ եղեալ ի սուրբ վարդապետն և յառնեն Աստուծոյ  
Տէր Յուսիայ որդոյն»: Տարբեր լիրեցուածներն են.  
առ 1 թ ի վրդապմանց 2 Ա նինից ի այրազգաց 3 Ա  
յերկրին 6 թ յամապատիմ: Երերնոյ վանի 7 թ զա-  
տուածաման 10 թ շրջակայ 12 թ հաւատոցն 13 թ  
հոգոց 16 թ լուսեալ 17 թ եւ սուս 19 Ա յամօրի-  
ցացն ի արևեսի: 22 թ անտանելով 26 Ա լիի վրդ-  
անէլ ի զամանեաց: Երիսունիցից 27 թ զիմն 28 թ  
անտանեաց 30 թ րէ 33 թ զբիսունիւ 34 թ ի նմա-

53 յաղաւեթից նորա: Եւ այսր մարմնական ինչ  
պարզես եկեղեցւոյն և վարդապետին: Եւ  
ասէր քծնելով և կեղծաւորութեամբ: աղա-  
շեմ յիշել զհայրն իմ յաղաւեթս քո ի ժամ  
սուրբ պատարացին: Եւ վարդապետն ասէր.  
զի՞նչ է անուն հաւր քո: Եւ նա ասէր ըստ  
առաջին մատածմանն, Կոճիկ է անուն հաւր  
իմոյ հայր սուրբ վարդապետ: Եւ յայն զի-  
շերն, զի էր կիրակի և տաւն տերունի: յա-  
ռանձնական աղաւեթսն զոր մատուցանէր առ  
Աստոււած, յիշէր և հայցէր ողորմութիւն և  
պայծառութիւն Կոճիկին: Եւ ի վաղին ելեալ  
մասգործն երթայր ի տուն իւր: Եւ իրեւ  
եհաս, ընթացեալ ի խոնութն յարում էր  
կոճն, տեսանել թէ իցէ նշան ինչ եղեալ:  
50 Եւ այն ինչ մերձ եղեալ խանութիւն: բու-  
րեաց ի քիմս նորա անուշահոտութիւն: Եւ  
բացեալ զգուռն խանութիւն, ետես զիոնն զի  
կանաչացեալ էր և աղգի աղգի տերես ու-  
ղեց արձակեալ, զոր ոչ էր տեսեալ ակն  
55 մարդոյ յաշխարհիս յայսմիկ: Եւ հոգւոց  
հանեալ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց:  
երանի տայր քրիստոնէիցն և իւրեանց հա-  
ւատին: Եւ ապա տեսեալ ընտանեացն և  
բնակչաց տեղուցն զմեծ և զարմանալի սքան-  
չելիսն, երկրայցան ի հաւատոցն իւրեանց:  
Եւ բազումք գարձան ի քրիստոնէութիւն:  
Եւ եղեալ մասգործն զիոնն ի զլուին իւր  
այնպիսի շքեղութեամբ սաղարթաւորեալ և  
ամենայն ընտանեալուն ընթացեալ առ սուրբ  
60 վարդապետն: և անգեալ յոտս նորա: և հայ-  
ցէր թողութիւն և ներողութիւն: Եւ ապա  
խնդրեալ զքրիստոսական կնիքն և զմկտու-  
թիւն: Եւ մկրտեաց սուրբ վարդապետն զնա  
ամենայն քրիստոնէիցն և ամենայն տեսողացն  
զնա, և փառս այսին Աստուծոյ: Եւ եղեւ  
խաղանանալ Երկրին Տարբերունոյ, զարձեալ  
զնաց սուրբ վարդապետն ի յառաջին բնա-  
կութիւնն իւր ի սուրբ ուխտան որ կոչի Ար-  
75 գելան: Եւ յերկարեալ բազում աւուրս բարի  
և առաքինասէր վարուք ի հաճոյս կամացն  
Աստուծոյ: Եւ հանգեաւ խաղաղական մա-  
հուատմբ ի Քրիստոս: Եւ եղաւ նշանաբը սորա

առ բաժին 35 Ա յաղորից 37-38 Բ յիշել աղաւեն  
39 Բ եւ սուրբն. ասէր 40 Ա և Բ մացմանն  
41 Բ հաւրն Ա և Բ 43 Ա տօն 46 Բ Կոճիկն 51 Բ  
անուշանութիւնն որ իւ զմայլեաւ անուշանութեամբ  
53 Բ կանաչեալ 54 Բ որ

55 Բ եւ ապա յոցոց 59 Բ տեղոյն.. զգումանա-  
լի 60 Բ ի հաւատն 62 Բ չի եւ 64 Ա ընտանեալոն 68-69  
Բ Մկրտեաց զնա ամենայն ընտանեալոն սուրբ վարդապետն  
69 Բ ուրախութիւն մած 72 Բ խաղաղութիւն 73-75 Բ զնաց

ընդ հոգանեաւ ամենասուրբ Աստուածածնին  
և սուրբ Կարապետին ի վանս իւր Երգելան,  
Հանդէպ Բերկրոյ, յարեմտից կուսէ արքայա-  
նիստ քաղաքին: Որ և առնէ գերեզման սորա  
բազում բժշկութիւն ամենայն ցաւոց: և ս  
առաւել կատաղեալ շանց: և ամենայն գաղա-  
նաց որբ խածատեն զմարդիկք: որբ յուսով  
և հաւատով գիմն և դան ի հեռաւոր և ի  
մաւակայ աշխարհաց ի տապան սորա և առ-  
նուն բժշկութիւն հոգւոց և մարմնոց ճըշ-  
մարտապէս:

Միր մատենագրանի № 603, 40 Ժո-  
ղովածուն, նօտր, թուղթ, անթուական, էջ  
15<sup>ա</sup>—16<sup>թ</sup> ունի սոյն այս պատմութիւնը  
փոքրի ինչ տարրեր խմբագրութեամբ. «Պատ-  
մութիւն Կոճիկ վարդապետին—Պատմիմ ձեզ  
միւս այլ սքանչելիս ելնա: Փոքրիկ պակասնե-  
րով, աւելի ռամկարան՝ լեզուով և ուղա-  
գրութեամբ (համբօ, կամեցո=համբաւ, կա-  
մեցաւ, ելն) վերջումն էլ թերի է մեռմ վի-  
խաղաղանալ երկրին՝ բառերի վրայ: Միակ  
ուշագրաւն այն է այս ձեռագրում, որ միշա-  
տակութիւն չկայ Ստ. Տէր. Յուսկան որդու  
մասին և մատկածը գարձել է վերնագրում՝ Կո-  
ճիկ վարդապետ:

Տէր Յուսկայ որդին իւր ճգնաւորական  
մեծ համբաւով, իւր հրաշագործութիւննե-  
րով շատ ժողովրդական էր: Նրա վարքն երգ-  
ւում էր գանձարաններում նրա մասին զրբ-  
ւում էին ներրողներ, նրա ձեռքով շինուած  
խայը և նրա գերեզմանը ուխտատեղի էին:  
Դ. Տ-ի № 47 գանձարանը գրուած կաֆա-  
յոււմ հայոց Ռոժ. Զ (=1607) թուին, էջ  
369<sup>ա</sup> ունի մի այդպիսի գանձ. «Ոտանաւոր  
Յակոր վարդապետն է ասացեալ ի վերայ Յուս-  
կանն որդոյն Ստեփաննոս քահանային—Եկայք  
պատմեմ ձեզ սքանչելի լրդվարք սըրբոյն  
Ստեփաննոսի | որ ի գեղջն Արտամէտի  
որդի Յուսկի քահանայի ...»: Այդ մեզ յայտ-  
նի՝ սրբի վարքն է ոտանաւոր, առանց կոճի-  
կի հրաշքին:

յառաջին թակութիւնն իւր Արդիան 80 թ ի վաճառ Արդի-  
ան 85 և խայճանն 87 թ մատիւոր Ա. Խօսկայ 87 թ  
էին և 88 թ զրմշկութիւնն հողոց

Բ ձեռացի լնրեցուածների բաղդասուրիւնն արին  
ըստ իմ խնդրանց պ. պ. Հ. Ամտուեան և Յ. Մանա-  
ղեան:

Մի ուրիշ՝ մինչեւ այժմն անծանօթ մնա-  
ցած զբող Աշխարհի—երեց Յովհաննես, ա-  
մուսնացեալ քահանայ, երեք ներբողեան ու-  
նի, մէկը Աստուածածնայ, միւսը Արգելանայ  
սուրբ Նշանին, որ կազմուած էր Յուսկայ  
որդու ձեռքով և երրորդը իրան՝ Յուսկայ  
որդուն նուիրուած: Այս ներբողեանները  
գանձում են մեր հիմնական մատենագրանի  
№ 628, 65 անթուական թուղթ, բոլորզիր  
ձեռագրում: Այս ձեռագրի բովանդակութիւնն  
է. էջ 1<sup>ա</sup>—253<sup>թ</sup> Պօղոս Յարօնեցու յայտ-  
նի վիճարանական սրութիւնը, առանց ա-  
նուան հիշինակի, սկզբից թերատ: Էջ 255  
աշխարհի—երեց Յովհաննիսի ներբողեանը  
սուրբ Աստուածածնին, վերնագրի տեղը դա-  
տարկ թողած: Էջ 272<sup>թ</sup>—289<sup>թ</sup> «Նորին մեղա-  
պարտ Յոհաննիսի աշխարհի իրիցոյ ասացեալ  
ի սուրբ Նշանն աստուածընկալ, որ այժմն  
կայ ի սուրբ վանքն Արգելանայ. — Աստանաւր  
յառաջ թերից զակիզբն պարծանաց զամենա-  
յաղթն նշան տերունական և աստուածա-  
կան ...»: Էջ 290<sup>ա</sup>—304<sup>թ</sup> «Նորին մեղապարտ  
Յոհաննէսի աշխարհի իրիցոյ ասացեալ ի  
սուրբն Ստեփաննոս, զոր և նշանացի աս(աս-  
ց)ին Յուսկանն որդի, ի յանապատն Արգելա-  
նայ որ և պատուական մարմին նորա անտ-  
րատ կայ ի նոյն վանս ի գերեզմանի. — Յար-  
փիաւոր և ի հրաշանիւթ լուսոյն ջահ վա-  
ռեալ համատարած ծագմամբ մշտագու և ան-  
ստուելանալի Յուսկանն որդի տէր Ստեփան-  
նոս ...»:

Դնենք մի քանի քաղուածքներ այդ ներ-  
բողեաններից, որոնցով բնորոշւում են Աս-  
տուածածնի և Խաչի պաշտաման ծայրայե-  
ղութիւնները՝ որոց կետեր չափազանց շեշ-  
տուած, ուր կան նաև հետաքրքրական տե-  
ղեկութիւններ Յուսկայ որդու մասին:

Աստուածածնայ ներբողեալ, էջ 266<sup>ա</sup>. Արգանդ  
որվայնի սորա՝ բերանոյ Հաւըն հազորդեցաւ, ըն-  
դարձակութիւն որովայնի սորայ՝ ծոց Հաւըն հա-  
ւասարհաց .. Դու ընդ երրորդութեանն փառաւորիս,  
դու ընդ երրորդութեանն երկրպագիս, դու ընդ  
երրորդութեանն պատուեալ մեծարիս, դու ի զիւ-  
կըս երրորդութեանն բազմեալ հանկիւս:

— էջ 268<sup>թ</sup> Եթէ երկնայինք և եթէ երկրա-  
յինք և ամենայն որ ինչ ընդ ընաւու քեւ պարբռ-  
պեալ ամրանան, հաստատութիւնք տարրական աւ-

դոց քեւ պնդեալ անվնաս ամրափակին, լուսատուք և լուսատեսք նոցին քեւ զտեալ վայելացան, գնացք լուսատուցն քեւ անխարդախ ուղեւորին, ցնդմունք աստեղացն առանց երկուանալոյ քեւ ի տեղին իւրեանց ժողովին, աւդք խստացուցիչք քեւ հանդարտանան ... [յիշում են օառնամանիք, ժամկը խոսվարաբք, ամբք կարկարերը, շնչմունք վնասակար հողմոց, ժամանակք ապականիչք արդեանց, նաւալարութիւնք ծովագնացիցն, վաստակք երկրադորձութեան ... զենմունք գառանց մերոց և բուրմունք ինկոց ... նուէրք մեր և պատարագք որ յանուն ննջեցելոցն քեւ ընդունելի լինիցեն], ողջակը մեր և զոհք և ամենայն որ ինչ յաղագս մեռլոց քեւ կատարեսցին ...»:

Խաչի ներբողից էջ 274<sup>ա</sup> «...ի վերայ հանկըսարանի լուսափայլ վարդապետի սրբոյն Ստեփանոսի, (յ)որում յորջորջեալ կոչի Յուսիկանն որդի»:

— էջ 278<sup>ա</sup> «Քեւ (=խաչիւ) ըմբռնեաց ի շըշթայս երկաթիս զփայլակն արագընթաց և արկ զնա, ի տարտարոսս գժոխոցն»:

— էջ 281<sup>բ</sup> «Քանդի ուր խաչն է անդ է խաչեալն և խաչելութիւն, ապա կոյրք են ափշեալք յիմաստից, որք ոչ զարհուրին ի ձեռյ քումմէ ... եթէ հրեայ իցէ եթէ հեթէ հեթանոս և թէ քրիստոնայ իցէ թերահաւատ՝ ի նոյն մնացէ կուրացեալ, իսկ մեք ազգոս ուղղափառաց զայս առեալ մեզ ի պարձանս ...»

— 287<sup>բ</sup> «Խոկ եթէ ի քեզ խաչեցաւ և նոյն անբաժանելի է ի քէն և ի քեզ առանեմք զնայ էռութեամբ և աստուածութեամբ»:

Ստեփանոսի ներբողից էջ 291<sup>ա</sup> «Յուսիկանն որդի տէր Ստեփանոսի ի Տարբերունոյ գաւառի յանապատին Արգելանայ», որ ունի զնմանութիւն մեծին Նրուսաղէմի և համանանոսիկը ուրին Գողդոթայի, ուր բարձրացաւ խաչն աստուածունակ. յերուսաղէմ գերեզման ստեղծաւզին զքեզ և Գողդոթայ տեղի խաչեցելոյն, անդ խաչն և խաչեցեալն. և ընդ քեզ ի քումք անապատի Սուրբ Նշանոս աստուածաբարձ՝ ի քէն կազմեալ և յարարչէն աւրհնեալ, ի քէն տաշեցեալ և յևստուծոյ աւծեալ, ի քէն գծագրեալ և արեամբն Քրիստոսի ներկեալ, ի քէն քանդակեալ և անեղին աջոյ զաւրացեալ ...»

— էջ 291<sup>բ</sup> «Ազգուէս գաւաղանաւն հերձեաց զծովն համատարած, իսկ դու քոինակազմ նշանաւ խաչիդ բաժանեցեր զ՝ [ի] քէն ուսեալ և հաւատացեալ ժողովուրդս ի հերձուածականացն մոլորութենէ. Խղիա համբարձաւ մարմնով ի վեր ի յերկինս, իսկ դու մարմնական աշաւք տեսեր զտէրն երկին և երկրի խաւսակից գոլով բերան ի բերան ...»

— էջ 292<sup>բ</sup> «Սուրբ Ստեփանոսս ... ուղղա-

փառ հաւատ, ուղղափառաց ուսուցիչ, ուրացութեան խափանիչ, հայհով[Հ]ականաց փախուցիչ, երկարնակաց ամաչեցուցիչ, հերիտիկոսաց ընդունիչ, հերձուածողաց քակտիչ, արիոսականաց հերքիչ, նեստորականաց անարգիչ, զՔրիստոս աստուած գաւանաւղ. խաւսիս որպէս հրեշտակ բարբառիս որպէս սերովլիւ»:

— էջ 293<sup>բ</sup> «յայլ մի և նոյն համապատիւթերութեամբ մեծարեալ պատ[ու]ով [զնրորդութիւնն] զման ուսուցեր», (Թերեւս ներբողազիրը Տէր Յուսիկան որդու աշակերտներիցն է): \*

— էջ 294<sup>բ</sup> «յորում (=Արգելան վանքում) բարձրացեալ ճոխանա[Հ] տաճար Տիրամաւըն և Աստուածանին և նշանու սուրբ և աստուածընկալ և Գերեզման հանկվատեան քո սուրբ ոսկերացդ»:

— էջ 300<sup>բ</sup> «Յուսիկանն որդի տէր Ստեփանոսս, որ զսաստակացեալ պատուհանն որ յաղագս մերոց կուտին ի վերայ մեր՝ շարժ և մահտարաժամ, թրթուր և ջարեակ և մարախ բազում կըսկ- [ծ]եցուցանաւղ և ստոնամանիք եղեմնական արագ յայտնեցար հերբաւղ և հալածաւղ ... առաքելոցն համեմատ, մարգարէիցն հաւասար, մարտիրոսացն համապատիւ»:

\*\*\*\*\*

Ի վերջոյ պէտք է աւելացնել այն, որ Տէր Յուսիկան որդին մի փոքրիկ մասն ունի մեր միջնադարեան մատենագրութեան մէջ. Նրա անունով ինձ յայտնի է բաւական կոկ-լիզուով՝ մի փոքրիկ հետաքրքրական գրութիւնն. «Պատութիւն երկրորդ գայստեանն Քրիստոսի և աշեղ դատաստանին. Ասացեալ ճգնաւոր վարդապետին Ստեփանոսի Յուսիկայ որդոյն. — Ի յահագին աւուր գալստեան որդուոյն. Աստուածոյ ի մէջ գիշերի կացեալ Գարբի-էլի ի մէջ երկին և երկրի յանկասկած և յեղակարծ ժամանակի և գովէ աշեղ և սաստիկ բարբառով և տսէ՝ Արլիք ննջեցեալք, ահա զայ Քրիստոս» (Ծառընտիր № 935, 2, էջ 149, բոլորզիր, թուղթ, անթուական) \*\*:

Գալուստ Տէր Մկրտչեան

1900 մարտ 26.

\* Աշխարհի - երկց Յովհաննեսի դրութեան մէջ յամափ են իւ և տաների շփորութիւն, օր խորհեաց - նորդեաց, հուսեցեր - խոսեցեր, նախապիհ - նախապէսեցեր, որ ցոյց են տալիս նկանակի կամ գրիի վասպուրականցից լինելը:

\*\* Յուսիկայ որդի Ստեփանոսի վարլ՝ Յայսաւուրցներից աւելի լ ն պ ա ք ա կ կ ա յ ե ր ա ս տ ա ր ա կ ո ւ ա ծ Պ ա ն դ ա կ ի պ ա տ ս ն տ ր ե ա մ ն է ն է տ, էջ 140. «Պատութիւն Տէր Յուսիկան և որդու նորդին. — ի բնականութեան